

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՏԱՆՈՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՆ

1962 թ. նոյեմբերի 23—26-ը կիսում ու
լվովում տեղի ունեցավ Հայկական և Ուկրաինա-
նական ՍՍԻ ԳԱ պատմության ինստիտուտ-
ների և Լվովի Հասարակական գիտությունների
ինստիտուտի գիտական երկրորդ նստաշրջանը՝
նվիրված Հայ և ուկրաինական ժողովուրդների
բարեկամությանն ու պատմական կապերին։
Նստաշրջանում լսվեց 26 զեկուցում և հազոր-
դում, որոնք վերաբերում էին բազմազան հար-
ցերի և ընդգրկում ավելի քան հազարամյա մի
ժամանակամիջոց՝ սկսած Կիևյան Ռուսիայի
պատմությունից մինչև մեր օրերը։ Դրանց մի
մասը աղբյուրագիտական ու պատմագիտական
ընդհանուր, մի զգալի մասն էլ փաստական
նյութի հետազոտման հիման վրա գրված աշ-
խատանքներ էին, որոնք շոշափում էին Լե-
հաստանի իշխանության տակ գտնված արև-
մտասլավոնական շրջանների երբեմնի հայ-
կական գաղթավայրերի սոցիալ-տնտեսական,
իրավական և բաղադրական դրությունն առնչ-
վող այլևայլ հարցեր։ Ըստ բովանդակության
այդ զեկուցումներն ու հաղորդումները կարելի
է խմբավորել մոտավորապես հետևյալ կերպ։

1. Հայ և ուկրաինական ժողովուրդների
բարեկամությունը և կուլտուր-տնտեսական հա-
մագործակցությունը Սովետական իշխանության
տարիներին։

2. Լվովի հայկական գաղութը։

3. Ուկրաինայի հայկական առաջ գաղթա-
վայրերը միջնադարում։

4. Հայ-ուկրաինական պատմական կապերը։

5. Հայկական տղայությունը Ուկրաինայի
մասին և ուկրաինական հեղինակներն ու ար-
խիվային նյութերը հայկական գաղթավայրերի
մասին։

Սովետական ժամանակաշրջանում հայ-ուկ-
րաինական կապերն և բարեկամությունը նվիր-
ված զեկուցումներն ու հաղորդումներն ընդգր-
կում էին հասարակական կյանքի զանազան

բնագավառներ և պատմում եղբայրական երկու
ժողովուրդների տնտեսական, կուլտուրական ու
ոգնական համագործակցության և փոխադարձ
օգնության մասին։ Փաստական նյութի լուսա-
բանմամբ զեկուցողները ցույց տվեցին, որ եր-
կու եղբայրական ժողովուրդների բարեկամու-
թյունն ու տնտեսական-կուլտուրական համա-
գործակցությունը, շնորհիվ Սովետական կառա-
վարության լենինյան ազգային բաղադրականու-
թյան, բոլորովին նոր բնույթ և ծավալ են ըն-
դունել և խարսխված են այն բնահանուր խնդրի
վրա, որ իրենց առջև դրել են մեր երկրի բոլոր
ժողովուրդները կոմունիստական հասարակարգ
կառուցելու ճանապարհին։

Պատմական գիտ. դոկտոր Ա. Բ. Հաբու-
րյունյանը և պատմ. գիտ. թեկնածու Կ. Բ. Ու-
դովյանը ներկայացրել էին «Հայ և ուկրաինա-
կական ժողովուրդների բարեկամությունը կո-
մունիզմի ծավալումն կառուցման ժամանակա-
շրջանում» զեկուցումը, որտեղ ցույց էին տվել,
որ հայ և ուկրաինական ժողովուրդների բա-
րեկամությունը կոմունիզմի ծավալումն կառուց-
ման ժամանակաշրջանում իր լայն արտացո-
լումն է գտնում երկու ռեսպուբլիկաների թե-
տնտեսական, և թե՛ կուլտուրական կյանքի աս-
պարեզներում։ Զեկուցողները բերեցին մի շարք
հետաքրքրական փաստեր Հայաստանի և Ուկ-
րաինայի արդյունաբերական ձեռնարկություն-
ների, կոլտնտեսությունների, ինչպես նաև ստեղ-
ծագործական զանազան կոլեկտիվների փոխա-
դարձ օգնության և համագործակցության վե-
րաբերյալ։

Արդի պայմաններում հայ և ուկրաինական
ժողովուրդների տնտեսական համագործակցու-
թյան հարցին էր նվիրված պատմ. գիտ. թեկ-
նածու Գ. Ի. Կովալչակի և Ուկրաինական ՍՍԻ
ԳԱ Տեխնիկա-տնտեսական խորհրդի գիտական
բարտուղար Պ. Պ. Սեմիլոտովի «Լվովի և
Ստանիսլավի ժողտնտխորհների տնտեսական
կապերը Հայկական ՍՍԻ-ի հետ» հաղորդումը։
Ելելով հայ և ուկրաինական ժողովուրդների
տնտեսական կապերի բազմադարյան պատմու-

1 Առաջին նստաշրջանի մասին տե՛ս «Պատմ-
ա-բանասիրական հանդես», 1959, N 4։

թյունը, նրանք իրավամբ բնագծեցին, որ Սովետական Ուկրաինայի հետ վերամիավորվելուց հետո (1939) արևմտաուկրաինական շրջանների (տվյալ գեպրում էվոլի և Ստանիսլավի շրջաններ) համար ես այդ կապերը սկզբունքորեն նոր բնույթ ստացան և հենվում են Սովետական Միության տնտեսության միասնության, աշխատանքի համամիութենական բաժանման և արտտնտեսական առանձին շրջանների մասնագիտացման վրա:

«Սովետական իշխանության տարիներին հայ-ուկրաինական մշակութային կապերի պատմությունից խորագիրը կրող գեկուցման մեջ պատմ. գիտ. թեկնածու Կ. Մ. Շեշուկը հանգամանորեն բնութագրեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո ստեղծված այն բարենպաստ պայմանները, որոնց շնորհիվ սովետական բոլոր ժողովուրդները կուլտուրական ծագվում են ապրել և ստացել են փոխադարձ շփման և բարերար ազդեցության հնարավորությունները: Նա բերեց շատ փաստեր Սովետական իշխանության տարիներին Ուկրաինայի և Հայաստանի միջև հաստատված կուլտուրական կապերի վերաբերյալ:

Բանասիրական գիտ. թեկնածու Ռ. Կիւշեւի իր գեկուցման մեջ նշեց այն մեծ ժողովրդայնությունը, որ վայելում են հայ գաղական և ժամանակակից գրողները էվոլի աշխատավորների շրջանում: Դրա ապացույցներից է այն փաստը, որ էվոլի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունում՝ «Էվոլսեմաշում» գործող գրական ստուդիան կրում է հայ մեծանուն բանաստեղծ Հ. Քումանյանի անունը: Այս ստուդիայի անդամները, որոնք մշտական կապ են պահպանում Հայկական ՍՍՄ Իջևանի շրջանի Շեշեկոյի տնվան գրական խմբակի հետ, իրենց բազմատիրած «Էվոլսեմաշիվեց» թերթում պարբերաբար տպագրում են հայ հեղինակների գործերից:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Ուկրաինայի պարտիզանական շարժման մեջ հայերի ունեցած մասնակցության մասին գեկուցեց պատմ. գիտ. թեկնածու Կ. Մ. Խալիլյան: Փաստական նյութերի հիման վրա նույնիսկ տվեց, որ Ուկրաինայում գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ ծավալված պարտիզանական պայքարին ՍՍՄԽ մյուս ժողովուրդների հետ միասին իրենց ակտիվ մասնակցություն են ունեցել նաև հայ ժողովուրդի գավակները: Հատկանշական է Սովետական Միության կրկնակի հերոս, գեներալ-մայոր Կովպակի և գեներալ Ռուդենկի պարտիզանական միավորումների մեջ մտած հայ պարտիզանների գործունեությունը Արևմտյան Ուկրաինայի մարզերում և Կարպատներում, ինչպես

նաև հայ ամենախոշոր պարտիզանական ջոկատի՝ Ա. Ի. Միկոյանի անվան ջոկատի գործունեությունը Ուկրաինայի տերիտորիայում:

Պատմ. գիտ. գիտոր Ա. Ն. Մեուսակյանը հանդես եկավ «Ուկրաինական ժողովրդի գավակները Կովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված պայքարում» գեկուցմամբ: Դեռևս 1918 թ. բազմաթիվ ուկրաինացի հեղինակներ Կովկասյան բանակի շարքերում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում թուրքական օկուպանտների դեմ մղված պայքարին, իսկ ավելի ուշ, արդեն 1920 թ. հերոսական Կարմիր Բանակի շարքերում հազարավոր ուկրաինացիներ մարտնչում են Ռեդերի ջանքում, Հայաստանում և Վրաստանում Սովետական իշխանության հաստատման համար, անձնվիրաբար օգնում տեղի աշխատավորներին՝ շահագործողների դեմ նրանց մղված պայքարում:

Սրանք էին սևսիայում քննարկված այն գեկուցումներն ու հաղորդումները, որոնց մեջ բուսարանվեցին հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությունն ու կուլտուրատնտեսական համագործակցությունը Սովետական իշխանության տարիներին:

Վերջին մի բանի տարիների բնագրում Ուկրաինական ՍՍՄ ԳԱ ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի գեկավարությամբ երիտասարդ գիտական աշխատողների մի խումբ գրադրում է էվոլի հայկական գաղութի պատմության գանազան հարցերով: Այդ հարցերը բուսարանելու համար նրանց հարուստ նյութ է մատակարարում էվոլի Պետական կենտրոնական արխիվը, որտեղ հայկական գաղութին վերաբերող բազմաթիվ և բիշ ուսումնասիրված նյութեր կան: Նստաշրջանում լսված ու քննարկված գեկուցումների մի զգալի մասը վերաբերում էր էվոլի հայ գաղութի պատմությանը:

Գիտական մեծ հետաքրքրություն էր ներկայացնում ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի «XIV—XV դարերի էվոլի հայկական գաղութի սկզբնավորման հարցի շուրջը» թեմայով գեկուցումը², որը բարձրացրեց մի շարք կարևոր հարցեր՝ կապված էվոլում հայերի հաստատման, նրանց գրադմունքների և իրավաբանական վիճակի հետ: Հենվելով XVII դարի էվոլի պատմագրաններ Իվ. Ալեքսևի և Ի. Վ. Ջիմորովիչի հաղորդած տվյալների վրա, Ի. Պ. Կրիպյակևիչը հավաստի համարեց այն միտքը, թե հայերը էվոլում սկսել են հաստատվել XIII դարի երկրորդ կեսից: Ընդ որում, գեկուցողի կարծիքով հայերը էվոլ են եկել ոչ թե

2 Ի. Պ. Կրիպյակևիչի գեկուցումը տպագրվում է «Հանդեսի» այս համարում:

ուղղակի իրենց հայրենիքից, այլ թաթարների իշխանություն տակ գտնված երկրներից, մասնավորապես Ղրիմից: Չեկուցողը մատնանշեց քաղաքի այն մասը, որտեղ առաջին անգամ ալերը բնակություն էին հաստատել. դա քաղաքի կենտրոնն էր, Պոդգամչեն, որ իմնադրել էին Գալիցիայի իշխանները: Ինչպես ցույց տվեց Պ. Ի. Կրիպյակեիչը, լեհական տիրապետության շրջանում, 1360 թ. հայերի մի մասը տեղափոխվում է քաղաքի նոր մասը. այստեղ նրանք առանձին թաղամաս են ստանում, որը մինչև որս էլ կոչվում է Հայկական փողոց: Ի. Պ. Կրիպյակեիչը կանգ առավ հայերի անանկական վերակերպումը միջնադարյան Լվովում: Հակառակ մի շարք հեղինակների, որոնք հայ գաղթավարների բնակության իմնական գրադմունքը համարում են սոսկ առևտուրը, Կրիպյակեիչը, նենվելով փաստական արժույթը նյութի վրա, ցույց տվեց, որ Լվովի հայերի մեծամասնությունը զբաղվում է եղի արհեստագործությամբ, ընդ որում ամենատարածված արհեստներից էին կաշվեմշակությունը և մետաղագործությունը: Արհեստների հետ միասին հայերն զգալի մասնակցություն են ունեցել նաև առևտրի մեջ, հանդիսանալով Արևելյան հետ կառավարող առևտրի միջնորդներ: Անդրադանով Լվովահայերի իրավա-քաղաքական վիճակին, Պ. Ի. Կրիպյակեիչը նշեց, որ նրանք կազմել են առանձին համայնք, ունեցել են իրենց վարչ (վարչապետ), ավագների խորհուրդը և ոգավել են հայկական իրավունքից:

Պատմ. գիտ. թեկնածու Ս. Ս. Բիլեցկին հանդես եկավ «Լվովահայերի պայքարը ունիայի և Վատիկանի դեմ» գեկուցումով: Նա լուստորանեց այն համար պայքարը, որ XVII դարի 30-50-ական թվականներին մղել են Լվովի հայերը ընդդեմ կաթոլիկացման, ինչպես նաև այն պաշտպանությունը, որ նրանց ցույց է տվել տեղի ուկրաինական բնակչությունը:

Լվովի սլաոմական թանգարանի աշխատակից Ա. Ա. Կրիվոնոսը հաղորդումը ընդգրկում էր Լվովահայ պատմության սակավ ուսումնասիրված կողմերից մեկը. դա XVII դարի առաջին կեսին արևմտաուկրաինական շրջանների առևտրի դարգացման մեջ Լվովի հայկական գաղութի ունեցած դերի լուստանման և զնահատման հարցն էր: Ընդգծելով տարանցիկ առևտրի մեջ Լվովի հայ վաճառականների կատարած դերը, Ն. Ա. Կրիվոնոսը միաժամանակ ցույց տվեց, որ հայերի կողմից Լվով բերված ապրանքների միայն մի մասն էր վաճառվում քաղաքում, իսկ հիմնական մասը վաճառքի էր տալվում այլ վայրեր, այդ թվում նաև Արևմտյան Ուկրաինայի այլ շրջաններ, որտեղ գոյություն ունեցած հայկական գաղթավայրերի հետ

Լվովահայերը առևտրական սերտ կապեր էին պահպանում: Արխիվային նյութերի հիման վրա Ն. Ա. Կրիվոնոսը լուստրանեց առևտրական այն կապերը, որ ունեցել են Լվովի հայ վաճառականները Կիևի, Չիգրինի, Բելայա Ցերկովի, Չասլավի, Օստրոգի և Ղևրաինական այլ քաղաքների հետ: Նա շեշտեց Մոսկվայի, Վյաչմայի, Մմոլենսկի և ռուսական այլ քաղաքների հետ առևտուր կատարող Լվովահայ վաճառականության դերը Ռուսաստանի ու արևմտաուկրաինական շրջանների տնտեսական կապերն ամրապնդելու գործում: Չեկուցողը խոսեց նաև այն մասին, որ Լվովի հայ բնակիչները արհեստների, արտաքին ու ներքին առևտրի մեջ ունեցած իրենց մասնակցությունը նպաստում էին քաղաքների և շուկայական կապերի դարգացմանը:

Լվովի համայնքարանի գրգենտ Վ. Ս. Կուլ-ժիվկու հաղորդումը նվիրված էր Միխիթար Բոչի «Դատաստանագրքի» կիրառմանը Լվովում: Չեկուցողը բազմաթիվ փաստերով ցույց տվեց, որ տեղի հայկական դատարանները իրենց պրակտիկ գործունեության ընթացքում զեկավարվել են Գոչի «Դատաստանագրքով», հաշվի առնելով, իհարկե, տեղական պայմանների առանձնահատկությունները: «Դատաստանագիրքը» թարգմանվել է լատիներեն և 1519 թ. մարտի 5-ին հաստատվել Լեհաստանի թագավորի կողմից՝ «Հայկական ստատուտ» վերադրությամբ: Ավելի ուշ՝ 1601 թ., «Հայկական ստատուտը», այսինքն Գոչի «Դատաստանագիրքը», թարգմանվում է նաև չեհերեն: Չեկուցողը նշեց, որ կարևոր նշանակություն տալով «Դատաստանագրքին», Լվովի համայնքարանի իրավաբանական ֆակուլտետի զեկանաոր ուսանողներին նրա հետ ծանոթացնելու համար հատուկ ժամն է հատկացրել:

Փիլիսոփ. գիտ. դոկտոր Վ. Կ. Չալուսաի զեկուցումը նվիրված էր XVII դարի հուլիսի սովալական մտքի աչրի ընկնող ներկայացուցիչ: Ստեփանոս Լվովցուն (Լեհացուն), Շաքաղրելով Լվովցու կյանքի ու գործունեության հիմնական դրվագները, զեկուցողը բնութագրեց նրա փիլիսոփայական հայացքները և նշեց նրա դերը մի շարք աշխատությունների (այս թվում նաև Արխատուելի «Մետաֆիզիկայի») թարգմանության գործում:

Ուկրաինայի հայերի մասնակցությունը հայ ազատագրական պայքարին թեմալով զեկուցում կարդաց սլաոմ. գիտ. թեկնածու Վ. Ա. Ուկլանյանը: Հիմք ընդունելով արխիվային նյութը, նա ցույց տվեց, որ Լեհաստանի իշխանության տակ գտնվող Արևմտյան Ուկրաինայի հայերը ես անտարրեր չեն եղել դեպի հայ ժողովրդի ազատագրական պայքարը ընդ-

դեմ Սուրբական և պարսկական տիրապետությանը՝ Սոկանյանը նշեց, որ հայ ազատագրական խմբումներին Ուկրաինայում ապրող հայերի ունեցած մասնակցությունը տվելի է աշխուժացել XVI—XVIII դարերում: Այդ հաստատելու համար Վ. Կ. Սոկանյանը բերեց մի շարք փաստեր:

Լվովի հայ գաղութի պատմությունից դառնալով գիտական սեփականում ղեկուցումներ ու հաղորդումներ լսվեցին նաև Ուկրաինայի մյուս հայ գաղթավարների մասին Պատմ. գիտ. թեկնածու Ե. Ի. Միշկոյի հաղորդումը նվիրված էր ռուսական տեղեկություններ Կիևի հայերի կյանքից XV—XVI դդ. թվականին, որը գրականության մեջ գրեթե չի ուսումնասիրված: Հաղորդման մեջ բերվեցին մի շարք նոր ու հետաքրքիր փաստեր: Զեկուցողը նույնիսկ ճշտեց, թե Կիևի որ մասում էր գտնվում հայ գաղութը: Նրա ասելով՝ հայերի տները գտնվում էին Ժիտնի շուկայի շրջանում, Շչեկիցկի բարձունքի տակ: Անդրադանալով Կիևի հայությանը գրադոմներին, Դ. Ի. Միշկոն շեշտեց գրանցից հիմնականում երկուստ՝ արհեստներն ու առևտուրը: Կիևի հայերի մեջ եղել են նաև աղվեսործներ ու երկրագործներ, որոնք ունեցել են խաղողի այգիներ, արտեր և խոտհարքներ: Կիևի հայերից ոմանք օգտվել են Մագդևորդյան իրավունքից և գտնվել բաղարային մագիստրատի իրավասության տակ: Կիևում ապրած հայերը միավորված են եղել եղբայրության մեջ, որի օգնությամբ պաշտպանել են իրենց տնտեսական ու բաղարական իրավունքները:

Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութներից մեկի՝ Սնյատինի հայ գաղութի մասին հաղորդում արեց պատմ. գիտ. թեկնածու Վ. Վ. Գուրովիցկին: Հին ուկրաինական այս բաղարում հայերը սկսում են բնակություն հաստատել դեռևս XVI դարում. 1628 թ. լեհական թագավորի կողմից Սնյատինի հայերին տված առանձնաշնորհումով գրվում է տեղի հայ գաղութի սկիզբը: Զեկուցողը համառոտակի բուսաբանեց գաղութի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը: Արժարժեցիկ Սնյատինի հայերի իրավա-սոցիալական վիճակը, ղեկուցողը, հենվելով 1628 թ. առանձնաշնորհման վրա, նշեց, որ նրանք ունեցել են նույն ինքնավարությունը, որպիսին ունեին Լվովի հայերը: Գաղթիցիան Սնյատինի կողմից գրավելուց հետո հայերը առանձնաբար կորցնում են իրենց առանձնաշնորհումները, և Սնյատինի հայ գաղութը փաստորեն վերանում է:

Յազովից, Կամենեց-Պոդոլսկ, Տիմոնիցա և Լեհաստանի գերիշխանության տակ գտնված ուկրաինական այլ վայրերում հաստատված

հայությունը իր գոյության բնույթում առաջ է քաշել հասարակական կազմակերպության զանազան ձևեր: Գրանցից մեկի՝ Կոռնիլով-րաց եղբայրությունների՝ գործունեության մասին ղեկուցեց պատմ. գիտ. թեկնածու Վ. Դ. Գրիգորյանը: Քաղաքային աշխատավոր երկ-տասնյակային այդ կազմակերպությունների նպատակը համարելով տնտեսական օգնության և համագործակցության իման վրա՝ ձեռնդրելի դեմ միասնական պայքար մղելը, Վ. Դ. Գրիգորյանը ցույց տվեց, որ այդ կազմակերպությունները բնդանուր շատ բան ունեին Հայաստանում գոյություն ունեցած նման եղբայրությունների հետ: Զեկուցողը այդ հաստատեց՝ համեմատելով ուկրաինական Յազովից բաղարի 1646 թ. և ումինական Բոտոշանի բաղարի 1690 թ. հայ տկտրիվորաց եղբայրությունների կանոնադրությունները հրդրեկայի «Եղբայրության» 1280 թ. «Կանոնադրության և կանոնների» հետ: Նա հաստատեց ուղղորդություն դարձրեց Տիմոնիցա բաղարի հայ գաղութի «Եղբայրության» արձանագրական հիշատակարանների վրա, որոնք պահպանվում Ուկրաինական ՍՍՌ Լվովի կենտրոնական պետական արխիվում, բայց որոնք մինչև օրս տակավին չեն ուսումնասիրված:

Հայ գաղթաբնակների մեջ թե բնակչության բնակավայր և թե կուլտուր-անտեսական գերավորություն տեղ է գրավում զրիմահայ գաղութը, որի առաջացման էր նվիրված պատմ. գիտ. թեկնածու Վ. Միխայելյանի «Երբ և ինչպե՞ս է սկզբնավորվել զրիմահայ գաղութը» թեմայով ղեկուցումը: Հայ և օտար աղբյուրների վկայությունների համեմատությամբ ղեկուցողը ցույց տվեց, որ արդեն XI դարում Ղրիմում գոյություն ուներ հայ մշտական բնակչություն, որը XI—XIII դարերում աշխույժ մասնակցություն էր ցուցաբերում սեծովյան ավազանի առևտրին:

Հայ-սլավոնական համեմեկ կապերին էր նվիրված Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անգամ Ս. Տ. Խրեմյանի ղեկուցումը «Պատմա-աշխարհագրական մի բանի զուգահեռներ «Ծամանակագրական տարեգրության» և Հոհան Սամիկոնյանի «Տարոնի պատմության» միջև» թեմայով: Զուգահեռ անցկացնելով այդ երկու աշխատությունների միջև, որոնցից մեկում պատմվում է Կիևի հիմնադիր երեք եղբայրների, իսկ մյուսում՝ Տարոնում երեք բաղարներ հիմնադրած երեք եղբայրների մասին, Ս. Տ. Խրեմյանը նշեց այդ տարեգրություններում հիշատակվող անունների նմանությունը և առաջ քաշեց հին ռուսականի վրա հայկականի ունեցած ազդեցության հնարավորության հարցը, որովհետև «Տարոնի պատմությունը» վերագրվում է ոչ ուշ:

րան VIII դարին, մինչդեռ «Ժամանակագրական տարեգրությունը» գրվել է VII դարի սկզբներին՝ 1113 թ.:

Պատմ. գիտ. թեկնածու Մ. Յու. Բ. Խաչենսկին իր «Կիևյան Ռուսիայի կազմավորման շրջանում հայ-ուսումական կապերի հարցի շուրջը» հաղորդման մեջ փորձեց մի փոքր այլ հիմնավորում տալ «Տարոնի պատմության» և Կիևի հիմնադրման մասին վերոհիշյալ կիսակեղև-դար ավանդության միջև եղած նմանությանը և այդ առումով՝ VI—VIII դարերի հայ-սլավոնական շփումներին: Նա գտնում է, որ «Տարոնի պատմության» և Կիևի հիմնադրման մասին ավանդության մանրամասն ուսումնասիրությունը կարող է հանգեցնել այն եզրակացության, թե մեր թվագրության I հազարամյակի երկրորդ կեսերին տեղի են ունեցել հայ-սլավոնական շփումներ, հետևապես նաև փոխադրեցության մոմենտներ:

Հայ-ուկրաինական կապերը XV—XVIII դարերում լուսարանում էին գտել պատմ. գիտ. թեկնածու Յա. Գ. Իսաևիչի զեկուցման մեջ: Զեկուցումը հիմնականում վերաբերում էր Ուկրաինայում ապրած հայերի և ուկրաինացիների միջև եղած կապերին: Զեկուցողը հատկապես կարևոր տեղ հատկացրեց բնահանութային կաթոլիկացման բաղադրականության դեմ հայ և ուկրաինացի աշխատավորների մղած պայքարին և հայ-ուկրաինական տնտեսական ու մշակութային կապերին:

Հայ-ուկրաինական կապերն ու բարեկամությունը, որոնք դարերի պատմությունն ունեն, արտահայտություն են գտել հասարակական կյանքի տարրեր ընդգծվածներում: Այդ կապերի ցայտուն արտահայտություններից մեկն էլ հայերի համակրանքն էր զեպի ուկրաինական կազակությունը, նրանց մասնակցությունը կազակային զորքերի զործողություններին: Այդ թեմայով հաղորդում արեց պատմ. գիտ. թեկնածու Ս. Պ. Շեչենկոս: Արխիվներում պահպանված կազակային զորքերի ցուցակների ուսումնասիրության հիման վրա նա ցույց տվեց, որ հայերը եղել են ոչ միայն շարային կազակներ, այլև զինվորական աստիճանավորներ:

Նախառնություններ շրջանի հայ իրականության մեջ զեպի Տարաս Շեչենկոյի ստեղծագործությունն անցած հետաքրքրությանն էր նվիրված Ֆիլ. գիտ. թեկնածու Վ. Լ. Շուր-բալսկու զեկուցումը: Զեկուցողը մասնավորապես կանգ առավ այն արձագանքների վրա, որոնք տեղ են գտել հայ մամուլի էջերում՝ Ուկրաինայի ազգային մեծ բանաստեղծի մահվան 50-ամյակի կոպակցությամբ:

Նստաշրջանին ներկայացված էին նաև ազգայնազիտական բնույթի երեք զեկուցում և մեկ հաղորդում: Հայկական ՍՍԽ ԳԱ թղթակիցանդամ Առն Մելիքսեթ-Մեկր իր «Հայ ազգայնաբանության մասին» զեկուցման մեջ ի մի էր հավաքել բոլոր այն նյութերը, որ պահպանել են հայկական ազգայնաբանության հիմնադրման մասին (վարարանական, նահատակազրական ազգայնաբան, X—XI դարերի հայ պատմիչ Ասողիկի «Պատմություն տիեզերական» գործը և այլն): Միաժամանակ, Հայաստանի և խորհրդային միջև եղած կապը ցույց տալու համար պրոֆ. է. Մելիքսեթ-Մեկր կատարեց հնազիտական պեղումների ժամանակ հայտնաբերված զանազան նյութերի հիմնավոր համեմատություններ:

Պատմ. գիտ. թեկնածու Վ. Ա. Հակոբյանը «Հայ ազգայնաբանության ուկրաինական բաղադրների մասին» թեմայով զեկուցման մեջ կանգ առավ ուկրաինական բաղադրներում ապրած հայ չեզոքականների ժամանակաշրջաններում, հիշատակարաններում, օրագրերում և ճանապարհորդական շրջաններում այդ առթիվ եղած տեղեկությունների վրա: Ժամանակաշրջանի առումով ուկրաինական բաղադրների մասին հայ չեզոքականների վկայությունները ընդգրկում են XV դարից մինչև XIX դարի 30-ական թվականները:

Լվովի սլավոնական արխիվի զիբեկտոր Ն. Ֆ. Վրադին իր հաղորդման մեջ հանգամանորեն պատմեց Լվովի արխիվի վավերագրական մատյանների մասին, որոնք կարևոր աղբյուր են Ուկրաինայի հայ զաղութները ուսումնասիրելու համար: Հայ զաղութների մասին Ուկրաինական ՍՍԽ Լվովի կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանված փաստաթղթերը զետեղված են բաղադրային և ինքնավարական դատարանների վավերագրական մատյաններում, Լվովի հայկական կոնսիստորիայի գործերում և Արևմտյան Ուկրաինայի այն բաղադրների վավերագրական մատյաններում, որտեղ ապրել են հայերը: Ն. Ֆ. Վրադին հատկապես նշեց հայ համայնքի գաղտնի գործերի կարևորությունը: Ընդգրկելով գրեթե 250 տարվա ժամանակամիջոց (1537—1783), հայկական գաղտնի գործերն ունեն բազմազան բնույթ և արտաքույում են Արևմտյան Ուկրաինայի հայ զաղթավայրերի տնտեսական, բաղադրական և հոգևոր կյանքը: Բայց հայ համայնքների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև ոչ հայկական զանազան գաղտնի գործերի գործերը, որոնց մեջ զետեղված են հայերի բողոքներն ու զանգուշանքները: Ահա թե ինչու, ինչպես իրավապիտեքն գտնում է Ն. Ֆ. Վրադին, կարևոր է նաև այդ գաղտնի գործերի ուսումնասիրությունը, որովհետև դրանք մեծապես կօ-

ժանդակեն աւելի հայտնի չափով պատմութեան ուսումնասիրմանը: Իսկ Վոլի մագիստրատի վավերագրային մատյաններից, հայկական բնակավայրերի մասին արժեքավոր նյութեր են պարունակում նաև Ստանիսլավի, Տերերովիի, Գալիչի, Քրոդի և այլ բաղադրների մագիստրատների նյութերը:

Վոլի հասարակագիտական ինստիտուտի աշխատակից Յա. Ռ. Գալիչիչը գեկուցում կարգաց «Ուկրաինայի պատմագրութեան ներգրումը Ուկրաինայի հայկական գաղութների ուսումնասիրման մեջ» թեմայով Կանգ առնելով տարբեր դպրոցների և ուղղութիւնների մի քանի տասնյակ ուկրաինացի պատմաբանների գործերի վրա, Յա. Ռ. Գալիչիչը լուսարանեց այն նշանակալից աշխատանք, որ տեղի հայ գաղութների պատմութեան ուսումնասիրութեան ասպարեզում կատարել են ուկրաինացի գիտնականները ինչպես անցյալում, այնպես էլ սովետական ժամանակաշրջանում:

Հայ և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերին և եղբայրական բարեկամութեանը նվիրված գիտական երկրորդ նստաշրջանը իր վերջին նիստում բնորոշեց մի շարք որոշումներ, որոնք ուղղված էին գիտա-հետա-

գրողական համատեղ աշխատանքները նետագայում էլ ազգի ակտիվացնելու և դործնական դարձնելու նպատակին: Սեփայի մասնակիցները որոշեցին առաջիկայում դումարել հայ-ուկրաինական պատմական կապերին նվիրված երրորդ գիտական նստաշրջանը: Նախատեսվում է դրան մասնակից դարձնել նաև միութենական ռեսպուբլիկաների և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմաբաններին: 1963 թ. դումարվելու է կոորդինացիոն խորհրդակցություն, որը քննարկելու է հայ-ուկրաինական կապերի ուսումնասիրման փնտերի «Ուկրաինայում հայկական գաղթավայրերի պատմութեան» պրոսպեկտը: Այդ աշխատությունները ստեղծվելու է հայ և ուկրաինացի գիտնականների համատեղ ջանքերով: Նախատեսվում է նաև հայ-ուկրաինական արխիվային աշխատողների օգնությամբ հրատարակել փաստաթղթերի ժողովածուներ: Ուկրաինայում պետք է հրատարակվի տեղի հայկական գաղութներին նվիրված ժողովածու, իսկ Հայաստանում՝ Հայկական աղբյուրները Ուկրաինայի մասին ժողովածուն:

Թ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԵՏԱԿԱՆ ՆԵՍԵ ՆՎԵՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԿՐՈՒԹՅԱՆ 450-ԱՄԵՅՆԻՆ

1962 թ. դեկտեմբերի 25-ին Մաշտոցի անվան Մատենադարանի նիստերի զանգվածում տեղի ունեցավ գիտական նիստ՝ նվիրված հայկական ազագրութեան 450-ամյակին:

Մատենադարանի գլխավոր, պատմ. գիտ. դոկտոր Առն. Խաչիկյանը բացելով նստաշրջանը կանգ է առնում այն վճռական նշանակության վրա, որ ունեցել է ազագրութիւնը հայ մշակույթի պահպանման ու զարգացման գործում: XVI դարը շատ ծանր է եղել Հայաստանի համար: Գարաժուրներն սկիզբ են առնում Ռոմանյան Թուրքիայի և Անճյան Իրանի միջև մղվող արշավանքի պատերազմները: Ահա այդ ժամանակ էր, որ հետադուր Վենետիկում սկիզբ է առնում հայկական ազագրութիւնը, որը այնուհետև ամենազգվարին պայմաններում հետագահեց զարգանում է: Սակայն հայ ժողովուրդը, որ միջնադարի մասը պայմաններում գերմարդկային ճիգեր էր գործադրում գրավոր իր մշակույթի պահպանելու և զարգացնելու համար, խկապես դրքի տեր դարձավ միայն մեր օրերում:

Առաջին գեկուցումը՝ «Հայկական ազագրութեան 450 տարին», կարգաց բանասիրական գիտ. թեկնածու Արամ Բաբայանը:

Մատենադարանի գիտաշխատող Ռաֆայել Իշխանյանի գեկուցումը նվիրված էր հայ առաջին ազագրի Հակոբ Մեղապարտի անձին և գործունեության հարցերին: Մի շարք հայտնի ուսումնասիրություններից բերված բազմաթիվ գեկուցողը ցույց տվեց, որ բանասիրները սահմանափակվել են Հակոբ Մեղապարտի մասին ստեղծված տարբեր ենթադրություններ անելով, քանի որ նրա վերաբերյալ եղած միակ գրավոր տեղեկությունը շատ հակիրճ է: Այդ ենթադրություններից մեկն այն է, որ Հակոբը եղել է վահագան և շահ առանալու նպատակով հայերեն գրքեր է պատվիրել խաչակրան մի ազգաբանում: Հազճնագրեն արված այդ ենթադրությունը՝ անցնելով դրքից-գիրք և հողվածից-հողված՝ դարձել է ամենատարածվածը: Գեկուցողը բազմաթիվ փաստերով ցույց տվեց այդ ենթադրության անհիմն լինելը: Հայ առա-

Ա. Բաբայանի գեկուցումը ազագրվում է «Հայկական» այս համարում: